

տագործվել են հազարավոր փաստաթղթեր: Այժմ «Բանբերը» հանաչում է ստացել և Հայաստանի սահմաններից դուրս, մասնավորապես արտասահմանի հայաշատ գաղթավայրերում:

Այժմ հրատարակության համար պատրաստ են շուրջ մեկ տասնյակ ժողովածուներ, այդ թվում՝ «ՀՍՍՀ ինդուստրացիան պատմությունը 1926—1940 թթ.», «ՀՍՍՀ գյուղատնտեսության կուլեկտիվացումը 1927—1937 թթ.», «Հենրգետիկայի զարգացումը Սովետական Հայաստանում 1920—1970 թթ.», «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմին», «Հովհաննես Իսահակով», «Անդրանիկ Յզանյան» և այլն: Բացի այդ, տարբեր հրատարակությունների կողմից լույս ընծայված բազմաթիվ ուսումնասիրություններում և մենագրություններում շարադրված ու պաշտպանված դոկտորական ու թեկնածուական դիսերտացիաներում առատորեն օգտագործվել են հանրապետության պետական կենտրոնական արխիվների վավերագրերը:

Այժմ պետական կենտրոնական արխիվների գիտաշխատողները հանդես են գալիս նաև արտասահմանյան հայ առաջադիմական մամուլում, ուր բնութագրելով հրապարակվող վավերագրերի արժեքը, միաժամանակ բարձրացնում են հայ ժողովրդի պատմությանը վերաբերող արխիվները զաղթավայրերից Սովետական Հայաստան փոխադրելու անհրաժեշտության հարցը:

Արխիվային վարչության և պետական արխիվների առօրյա աշխատանքներում կարևոր տեղ է զբաղում փաստաթղթերի հիման վրա թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպումը: 1956—1972 թթ. պետական կենտրոնական արխիվները կազմակերպել են 25-ից ավելի

ցուցահանդեսներ, որոնք աշխատավորության կողմից դիտվել են մեծ հետաքրքրությամբ:

Արխիվային փաստաթղթերը այժմ մեծ օգտագործում են ստացել հեռուստատեսության ստուդիայում, վավերագրական ու խրոնիկալ կինոնկարներում, սադրահանդերում և այլն:

Այժմ հանրապետության պետական կենտրոնական արխիվներն ահել ու ամրագրվել են և կարևոր աշխատանք են կատարում վերածրված սոցիալիստական Հայաստանի հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությամբ առաջացած և հետոց ժառանգություն մնացած փաստաթղթային նյութերի պահպանումն ապահովելու, պիտատեղեկատու ապարատ ստեղծելու և կատարելագործելու, ինչպես նաև փաստաթղթերի բազմակողմանի օգտագործման ուղղությամբ:

Սավալվել են արխիվային ֆոնդերի ապահովագրման ու միկրոֆոտոլարորատորիայի աշխատանքները, համարվելով ժամանակակից արխիվային տեխնիկայով՝ տարբեր ախի բազմաջնոց մեքենաներով ու հարմարանքներով: Կինո-ֆոնո-ֆոտո արխիվն ունի կինոֆապիլենների վերականգնման, երևակող, պատճենահանման, ձայնամոնտաժման մեքենաներ, կինոնկարահանման ու ցուցադրման տարբեր ապարատներ և այլն:

Անցած 50 տարիներին արխիվային շինարարության ընազտվածում ձեռք բերված նվաճումներն արդյունք են ոչ միայն հանրապետության արխիվիստների քրտնաշան աշխատանքի, այլև Հայաստանի կուսակցական ու սովետական ղեկավար մարմինների և Սովետական Միության արխիվային վերադաս հիմնարկների մեծ օգնության:

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԹԻՎ

ՀՍՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակության է պատրաստում Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը:

Հազար տարի է անցել Նարեկացու (951—1003) ապրած ժամանակաշրջանից, սակայն նրա ստեղծագործությունն այսօր էլ պահպանել է իր գեղարվեստական հմայքը:

«Մատեան ողբերգութեանը» Նարեկացին ավարտել է 1002 թվականին: Այն մեզ է հասել բազմաթիվ ընդօրինակություններով՝ լրիվ, թերի բաղվածո կամ հատվածաբար: Ընդհանուր թիվն անցնում է 200-ից, որից շուրջ 150-ը գտնվում է Մաշտոցի անվան

Մատենադարանում, 19-ը՝ Վենետիկում, 27-ը՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի գրատանը: Հավագույն ընագիրը, ինչպես ընդունված է, համարվում է հեղինակի ինքնագիրը, որ նրա կամքի վերջնական արտահայտությունն է, ստեղծագործության իսկականը: Դժբախտաբար չի պահպանվել ոչ միայն Նարեկացու ինքնագիրը, այլև գոնե XI դարի որևէ ընդօրինակություն: Հնագույն ձեռագրերը XII դարից են:

Ի Երուսաղեմի ձեռագրերից 20-ի նկարագրությունը կա Ն. Պողարյանի կազմած «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» II—VI հատորներում:

Ստույգ տարեթիվ ունի, որքան հայտնի է մեզ, միայն մեկը՝ Մատենադարանի № 1568 ձեռագիրը: Այն պատկանել է Ներսես Լամբրոնացուն և գրված է 1173 թ.: Ահա այդ ձեռագրի հակիրճ նկարագրությունը՝ ըստ Ե. Հովսեփյանի. «Նյութ՝ ազնիվ մագաղաթ, գիր՝ սրանշնչի, փոքր Լրկաթագիր, մանրանկարչական, գրիչ՝ Գրիգոր, ստացող՝ Ներսես Լամբրոնացի, ժամանակ՝ ՌԻԲ=1173»²:

Կա մի այլ ձեռագիր (Մատենադարան, № 5939), որը ենթադրաբար համարվում է 1171 թ. ընդօրինակություն: Ձեռագիրն ունի հիշատակարան, բայց պակասավոր է (թերթեր են ընկած): Գրչության ժամանակի մասին տեղեկություն չի պահպանվել: Կարծում ենք, որ այդ ենթադրությունը ծագել է ձեռագրի մի ուրիշ, ուշ գրված հիշատակարանի սխալ մեկնաբանությունից. «Դարձնալ յիշեցէք և աստուած ողորմի ասացէք Արզուրումեցի Գրիգոր վարդապետին և իւր ծնողացն...: Եւս առաւել աստուած ողորմի ասացէք տէր Մկրտչին...», որ բազում աշխատանք ունի ի սուրբ գրքիս. ի թվականութեան հոռմայեցի ՌՃՀԱ (1171) ամին, առաջնորդութեան նարեկայ Մինաս արհի եպիսկոպոսին»³:

Մինաս վարդապետ Ղափանցին նարեկավանդի առաջնորդ է եղել 1705—1722 թթ.⁵: Գրիգոր Արզուրումեցին, ամենայն հավանականությամբ, իր հիշատակարանում բաց է թողել և՛ փրկչական թվականը, և՛ նշված թվականից առաջ՝ հայոց բառը: Ձեռագիրը, հավանաբար, XIV դարի է: Վենետիկի և Երուսաղեմի թվականի հնագույն ձեռագրերը XIV դարից են: Մատենադարանում XIII դարից մեզ են հասել շուրջ 10-ը, XIV դարից՝ 20-ից ավելի թվակիր և անթվակիր ձեռագրեր: Դրանք էլ համարվում են «Մատենան ողբերգութեան» երկի լավագույն ընդօրինակությունները: Ընտիր ձեռագրեր կան նաև XV դարից:

Բոլոր ձեռագրերի համեմատությունը թույլ է տալիս նրանց բաժանել 4 խմբի՝ ըստ բնագրային տարբերությունների. 1. ձեռագրեր, որոնք ծագում են Լամբրոնացու օրինակից կամ ունեն ընդհանուր աղբյուր, 2. ձեռագրեր, որոնք ծագում են Մխիթար վարդապետի օրինակից կամ ունեն ընդհանուր աղբյուր, 3. ձեռագրեր, որոնք ծագում են Գրիգոր Խլաթնցու օրինակից կամ ունեն ընդհանուր աղբյուր և 4. ձեռագրեր, որոնք ունեն շեղվող հատվածներ:

Անշուշտ այս բաժանումը որոշ առումով պայմանական է, բանի որ գրիչները, իրենց իսկ վկայությամբ, հաճախ ձեռքի տակ ունեցել են մի քանի ձեռագրեր, ընդօրինակելիս նախապատվություն են տվել մերթ մեկին, մերթ մյուսին, սրբագրություններ են արել, լուսանցքներում նշել տարբերությունները և այլն: Գրիչ Խաչատուր կրոնավորը, օրինակ, 1247 թ. ընդօրինակած իր ձեռագրի հիշատակարանում խընդրում է մեղքերի թողություն հայցել նաև ոմն Պետրոս վարդապետի և նրա եղբոր համար, որը «զմի արինակն ետ, զի յերկուց արինակաց գրեցաւ»⁶: Ահա և մի ուրիշ հիշատակարանից՝ գրված 1319 թ. ք... Եւ զձեզ աղաչեմ, որ պատահէք զինչ արինակաւ և իցէ, յիշել աղաթիւք զեղկելիս Վարդան և զՍիմէոն հայրն իմ, որ յուրվս է աշխատեալ վասն իմ, և անյարմարութեան և սխալման գրոյս ներեցէք, զի բազմավիշտ ոգուով և խաւարեալ մտաւք և յոժցաւած մարմնով գրեցի. բայց արինակաց անփոյր շարաւի, րէպէտ և ի բազմաց վկայեալ էին արինակաւս, այլ յերից և ի շորից, է զի և ի հնգից արինակաց, որչափ կարացի՝ ուղղեցի»⁷: Մի օրինակ ևս. «Գիրգս Մխիթար վարդապետի արինակէն է ըղորդած. աւելին Գեորգ և ստոյգն ի գրած»⁸: Այդ ուղղումները որոշ դեպքերում վերաճել են աղավաղումների:

Բնագրական նորության արժեք ունեն շեղվող հատվածներ ունեցող ձեռագրերը: Այսպես, օրինակ, այդ խմբի ձեռագրերում Զ Բանն ունի մի հատված, որը տեղ չի գտել մինչ այժմ եղած ոչ մի տպագրության մեջ. Բնագրական նորության արժեք ունեն շեղվող հատվածներ ունեցող ձեռագրերը: Այսպես, օրինակ, այդ խմբի ձեռագրերում Զ Բանն ունի մի հատված, որը տեղ չի գտել մինչ այժմ եղած ոչ մի տպագրության մեջ.

Ոչ պակաս բան Վարդան զստեղծուած սրտիս իմ խստացուցի, Ոչ քերի քան զերբայական խումանին կատաղութիւն՝

Բնողիւմ արարչիդ համբարձայ. Ոչ նուազ քան զաստուծամարտիցն՝ գտայ հանդէս, Եւ ոչ խորեցայ ի յուրացութենէ՝ ստեղծողիդ բնաւիցս.

2 Գ. Հովսեփյան, Հիշատակարանը ձեռագրաց, Անթիլիաս, 1951, հատ. Ա, էջ 447:

3 «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», կազմեցին՝ Օ. Եղանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1970, հատ. Բ, էջ 216:

4 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5939, էջ 203բ:

5 Տե՛ս Հ. Ոսկյան, Վասպուրականի վանի վանքերը, Ա մաս, Վիեննա, 1940, էջ 198—199:

6 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3929, էջ 336բ:

7 Նույն տեղում, ձեռ. № 3589, էջ 344բ:

8 Նույն տեղում, ձեռ. № 5883, էջ 468բ:

Հատ օրինակի խոսվածքան մրրկաց ծովու ծփեցալ...⁹

Կասկածից վեր է, որ ընդգծված տողերը, որոնք դուրս են մնացել «Մատեան ողբերգութեան» երկի հրատարակութիւններից, պատկանում են Նարեկացուն: Կասկածից վեր է նաև, որ այդ տողերը ձեռագրերի մեծ մասից դուրս են մնացել ոչ թե պատահականորեն, այլ խրմբագրական մտեցմամբ:

Նարեկացու երկը մեր հին գրականութեան ամենից շատ հրատարակված գործն է, նրա տպագրութիւնների թիվն անցնում է 50-ից: Առաջին անգամ «Մատեանի» տպագրութիւնը ձեռնարկել է մեծավաստակ տպագրիչ Ոսկան Երեւելանցին¹⁰: 1673 թ. Մարսելում նա սկսել է տպագրութիւնը, որն անավարտ է մնացել Ոսկանի մահվան պատճառով (տպագրվել է միայն 48 էջ):

Առաջին ամբողջական տպագրութիւնը լույս է տեսել 1701 թ. Կոստանդնուպոլսում: Հրատարակել է Երուսաղեմի պատրիարք Մինաս Ամրեցին, ձեռքի տակ ունենալով էջմիածնի, Խոր Վիրապի, Սեանի, Սաղմոսավանքի և Երուսաղեմի ձեռագրերից կազմած բնագիր: Ահա թե ինչ է գրում նա այդ մասին. «Արդ՝ ես տէր Մինաս արհի եպիսկոպոս և պատրիարք սրբոյ Երուսաղէմի որ ի վիճակին հայոց՝ ի կանուխ ժամանակաց ունելով փափաք ընդ աստուածային դրգոյս այսմիկ՝ միշտ և ամենայն ուրեք մխիթարէի սովաւ: Իսկ ի շուքն իմ ի սուրբ Երուսաղէմ ի թուին ՌՃԽ (1691) գտի անդ ևս զբանս աղօթից սրբոյ Նարեկացոյն այլ ևս զլուխս Ե (5) սրպէս տեսանի ի վերջն գրքոյս այսմիկ: Եւ զկնի ամաց ի զնալն իմ ի սուրբ աթոռն էջմիածին՝ ի նորին գրատանէ. Սաղմոսապանից. ի Խոր Վիրապէ և ի Սեանու անապատէ ևտու բերել զհինգ գիրք Նարեկի և սկսայ սրբագրել զսա բազում զգուշութեամբ՝ այսինքն զսղալեցեալսն ի գրչաց ուղղագրեցի ի հնգից օրինակէ»¹¹:

Ամրեցին չի տվել իր օգտագործած ձեռագրերի նկարագրութիւնը (շատ հավանական է, որ Սաղմոսավանքի, էջմիածնի, Սեանի և Խոր Վիրապի ձեռագրերն այժմ գտնվում են Մաշտոցի անվ. Մատենադարանում): Նա ոչինչ չի

ասել նաև բնագիրը սրբագրելու իր սկզբունքների մասին, չի տվել ոչ մի տարրնթերցված:

Երկի երկրորդ հրատարակութիւնը լույս է տեսել 1726 թ. դարձյալ Կոստանդնուպոլսում: Օգտագործված ձեռագրերի մասին ասված է հետևյալը. «... տպագրեցաւ սուրբ գիրքս աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ և ճգնագեաց վարդապետի ի բազում և լաւ օրինակաց. բազմաշխատ երկամբ սրբագրութեան. զայլ և այլ օրինակսն ընդ միմեանս համեմատելով. որ և ի խնամոցն աստուծոյ գոար հին օրինակ մի, որ գեր ի վերոյ էր քան զայլսն. յորմէ բազում ինչ սխալանս և պակասութիւնս բառից և բանից ուղղեցար շնորհին աստուծոյ»¹²:

1736 թ. Կոստանդնուպոլսում լույս է տեսնում գրքի նոր հրատարակութիւնը: Դա նախորդի վերահրատարակութիւնն է և բնագրագիտական առումով հետաքրքրութիւն չի ներկայացնում: Այստեղ էլ ասենք, որ ակադեմիական նոր հրատարակութեան պատրաստման համար կօգտագործվեն այն հրատարակութիւնները, որոնք ունեն ձեռագրական աղբյուրներ: Վերահրատարակութիւնները օժանդակ աղբյուր կլինեն՝ նախորդ հրատարակութեան վրիպակների սրբագրման համար:

1755 թ., դարձյալ Կոստանդնուպոլսում, լույս է տեսել «Մատեանի» նոր հրատարակութիւնը: Գրքի հիշատակարանում խոսվում է նաև այն մասին, որ հրատարակութեան թերութիւններն անխուսափելի են, «զի վասն յաճախութեան բառիցն և խորութեան մտացն ընդելուզեալ մարգարտայեռ ասացուածոցն ոլորուն հիւսելոց՝ բուն իսկ ոճիւ ճարտասանութեան, տակաւին մնան ուղղելիք ըստ կանոնի բերթութեան, կարօտեալ ինքեան իսկական ստոյգ ձեռագրի հեղինակին»¹³: Սա նշանակում է, որ հրատարակիչները ավելի շրջահայաց են վերաբերվել ձեռագրական տեղեկութիւններին՝ անվերապահորեն ուղիղ չհամարելով մեկի և սխալ՝ մյուսի ընթերցվածը:

Նարեկացու գրքի տպագրութեան պատմութեան մեջ նշանակալից է 1774 թ. Կոստանդնուպոլսի հրատարակութիւնը, որ լավագույնն է մինչև այժմ: Հրատարակիչները իրենց ձեռքի տակ ունեցել են շուրջ 30 ձեռագիր: Տպագրութիւնը նախաձեռնել է Գասպար ամիրա Մուրատյանցը, որի մասին գրքի հիշատակարա-

⁹ Նույն տեղում, ձեռ. № 3863, էջ 21բ:

¹⁰ Տե՛ս Ա. Ղազարի կյան, Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կյանքի, Վենետիկ, 1909—1912, հատ. Ա, էջ 471 և հտ.:

¹¹ «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ արարեալ», Կ. Պոլիս, 1701, էջ ԾՄԱ (երկրորդ համարակալում):

¹² Հանդես, № 4

¹² «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հոճտորի», Կ. Պոլիս, 1726, էջ ՆԻէ:

¹³ «Նարեկ գիրք, գիրք աղօթից ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետի», Կ. Պոլիս, 1755, էջ 573:

նում ասված է, թե նա ...ի քաղաքաց քաղաքաց Հայաստանեայց և ի բուն իսկ ի Մոկաց գաւառէ՝ մեծաջան փութով զտեալ օրինակս ընտիրս՝ հնազոյնս՝ անձևումերձս, յորոց զերկուցն՝ սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց զիր, յորս էր՝ որ զմատենաս, և էր որ զտարբերութեանց նոցա զգանազանութիւնս առձեռն բերեալ, մինչև թիւ օրինակացն հնոց և նորոց ժամանել ի համար երբեակ տասանց. և խրախուսեաց զմեզ աշխատակցիլ: Ընդ որս համեմատելով զոր ինչ համաձայնութիւն ընտիր օրինակաց ըստ յարմարութեան բանին՝ ըստ դատման ներհուն եղելոց առաջնորդեցին զայն և եթ կալաք, որպէս օրէն է հաւատարիմ սպասաւորի՝ հարազատութեան բանից սրբոց. և այն յերկար և մտասոյզ քննութեամբ»¹⁴:

Այստեղ բացառիկ հետաքրքրութիւն է ներկայացնում այն տեղեկութիւնը, թե ձեռագրերից երկուսը համարվել են նարեկացունը: Դրժրախտարար, հրատարակիչները շեն տվել ձեռագրերի նկարագրութիւնը, ուստի դժվար է անվերապահորեն ընդունել այդ հաղորդման հավաստիութիւնը: Ավանդարս՝ են վերադրվել նարեկացուն, թե՛ եղել են ձեռագրական հիմքեր, — մնում է բաց: Եվ սա այս հրատարակութեան հիմնական թերություններից մեկն է: Հրատարակիչները շեն նշել իրենց օգտագործած ոչ մի ձեռագրի ստույգ թվականը, շեն անդրադարձել քննական-համեմատական բնագիր կազմելու իրենց սկզբունքներին: Ընդարձակ առաջարկում, ի տարբերություն նախորդ հրատարակութիւնների, նրանք բերում են բազմաթիւ տարբերութիւններ՝ բանասիրական քննութեամբ ցույց տալով, թե ինչպիսի փոփոխութիւններ է կրել նարեկացու երկը, որն է ընդունելին և որը մերժելին, ինչու են հարազատ համարում տվյալ ընթերցվածը և սխալ մի այլ ընթերցված, շարահյուսական համաձայնութիւն, կետագրութիւն և այլն: Առաջարկում, օրինակ, ասված է. «Ասկա յայսմ ամենայնէ ժամանակաց ի ժամանակս ձեռս ի ձեռաց անցանելով՝ այնչափ այլալուծութեամբ աղաւաղեալ էին բանք մատենիս օր ըստ օրէ, մինչև բազում ուրեք ամենևին օտարանալ նոցա՝ ի հարազատութենէ մտաց և գրութեան սրբոյս. և բեզ ասացոյց նախ առաջին՝ յառաջին մակագրութենէ վերտառութեան մատենիս, ուր բազում տպագիր՝ ևս և ձեռագիր ինչ օրինակք եղեալ էին այսպէս. դրունք յոգնաբախանձ. և ուրեք. զրուրիւնք յոգնաբախանձ. որ ըստ հին և ըստ բուն ձեռագիր օրինակաց պարտի լինիլ

դրուրիւնք յոգնաբախանձ, որպէս եղաք ի սմա»¹⁵: Այս ճշգրտումն այսօր էլ ընդունելի է: Մի օրինակ ևս. «Եւ դարձեալ ի նոյն վերտառութեանն այնպիսի օրինակք ինչ եղեալ էին այսպէս. Գրիգորի նարեկայ վանաց վանականի, հոգեմատենան հոստորի և հայոց փիլիսոփայի, — որ է անդէպ. բանգի դէմք բանիցս են ի բերանոյ սրբոյս՝ զոր ըստ խրատու իմաստնոցն՝ զովէին ընկերքն՝ և ոչ իւր բերան. վասն որոյ ըստ հին և ըստ բուն օրինակաց եղեալ էր միայն՝ Գրիգորի նարեկայ վանից վանականի. ըստ որոց և մեր եղաք այնպէս»¹⁶:

Այսպիսի նուրբ ու ճիշտ դիտողութիւններ են արված նաև տարբերութեան, շարահյուսական խանգարումների ու կետագրութեան վերաբերյալ: Իրենց մտքերը հրատարակիչները հաստատում են օրինակներով՝ բերված թե՛ ձեռագրերից և թե՛ տպագրութիւններից, սակայն առանց որոշակիորեն ցույց տալու իրենց աղբյուրները: Հիմք ընդունելով անսպասելի որոշ ձեռագրեր, նրանք փոփոխութիւն են կատարել նաև «Մատենանի» կառուցվածքի մեջ, միաժամանակ հրատարակելով նախորդ տպագրութիւնների ինչ-ինչ նորամուծութիւններին:

1. Փոխել են ԿԲ և ԿԳ, ինչպես նաև ՂԲ—ՂԾ գլուխների կարգը:
 2. Չեն գրել «Լուծմունքը», բանի որ «ի խորին տեսութիւնս իմաստից նորահայնաց սրբոյս՝ այնչափ կարճոյ դիտակմամբ ոչ ինչ կարէ խորանալ ակն ընթերցողին»¹⁷:
 3. Հրատարակել են աստվածաշնչական հրդումները տալուց, «որք շեն եղեալ ի սրբոյս, այլ յայլոց՝ ընդ ժամանակս ժամանակս նշանակեալ. զի ուր ինքն կամեցեալ է, նշանակեալ է զտեղին ի նոյնիսկ ի կարգի բանին...»¹⁸:
 4. Չեն տպագրել նարեկացու ներբողներն ու գանձերը:
 5. Կազմել են խրթին բառերի բառարան: Մեծ էր այս հրատարակութեան գիտական ու բանասիրական նշանակութիւնը: Չնչին բացառութեամբ այն դարձել է հետագա հրատարակութիւնների վստահելի աղբյուրն ու հիմքը: Միայն վեներտիկում այն վերահրատարակվել է տասը անգամ (առաջին անգամ՝ 1789, վերջին անգամ՝ 1926 թ.):
- Հաղիվ քառորդ դար էր անցել, երբ այդ հրատարակութեան թերությունների վրա ուշադրութիւն հրավիրեց հմուտ բանասեր Գաբրիել Ավետիքեանը: 1801 թ. վեներտիկում նա հրատարակեց

¹⁴ «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի նարեկացոյ հոգեկիր հոստորի բաշխեալ յիննսուն և հինգ բանս՝ հոգեսուն մաղթանաց», Կ. Պոլիս, 1774, էջ է:

¹⁵ Նույն տեղում, էջ Ը:
¹⁶ Նույն տեղում, էջ Ժ:
¹⁷ Նույն տեղում, էջ Բ:
¹⁸ Նույն տեղում, էջ ԻԱ:

տարակեց ձևարեկ աղօթից հարազատ և զգուշաւոր լուծմամբք նորոգ բացայայտեալ (Նարեկլուծ)» գիրքը (1827 թ. լույս տեսաւ այդ գրքի բարեփոխված հրատարակութիւնը): Նըպատակ դնելով նորովի ու յուրովի մեկնարանել, լուսարանել ու բացատրել «Մատեան ողբերգութեան» երկը, Ալեքտիբյանն ամենից առաջ գործ ունեւր բնագրի հարազատութեան հետ: «Առ ի գիւտ հարազատ իմաստից գրոց՝ հարազատութիւն բնագրին է խնդրելի,—գրում է նա,— նմին իրի ի լուծումն առնումք զբնագիր մատենիս ըստ օրինակին՝ որ ի բաղմապատիկ սխալմանց սրբեալ տպագրեցաւ ի Կոստանդնուպօլիս, և ի մէնչ: Բայց և առ այնու ի ձեռագիր օրինակս՝ որ առ մեղ, դարձեալ հետաքննեցար. մանաւանդ որ ընտրելագոյնն է՝ դրեալ ի մեր թուին 929 (1324), և յետ այնր համեմատեալ ևս ընդ այլ օրինակի Մխիթարայ ուրումն վարդապետի, առ որ յիշատակագիր համառօտ յաւելեալ ազդ առնէ՝ կարի վստահանալ ի նոյն: Յօրինակէ աստի բաղում ուրեք յիշատակեմք ի կարգի լուծմանցս զտարբերութիւնսն, որ ի կարգի տպագրեցելումն այլազգեղեալ կան...»¹⁹:

Այդ տարբերութիւնները սկսվում են «Մատեան ողբերգութեան» երկի առաջին իսկ մասի առաջին տողից: 1774 թ. հրատարակութեան մեջ այն այսպես է. «Ձայն հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի...»: Ալեքտիբյանը բերում է դրա տարբերակը՝ ըստ իր օրինակի. «Ձայն հառաչանաց հեծութեան ողբոց՝ սրտից աղաղակի...»: Այսպես է և Մատենադարանի հնագույն ու լավագույն ձեռագրերում: Իհարկե, այս ընթերցվածը հայտնի է եղել և 1774 թ. հրատարակիչներին, սակայն նրանք ըստ իրենց ճաշակի ու իմացութեան ընտրելով մի ընթերցված, չեն տվել մյուս ընթերցվածները, բավարարվելով միայն առաջարանում տրված մի քանի տարբերութիւններով: Սա այդ հրատարակութեան գլխավոր թերութիւնն է: «Մատեանի» կրած փոփոխութիւնները կարևոր են ոչ միայն այդ երկի, այլև ինչ-որ չափով նաև գրականութեան պատմութեան համար: էլ չենք ասում, թե ինչ անգնահատելի նյութ կարող են դրանք տալ լեզվի պատմութեան ուսումնասիրմանը:

1948 թ. Բուենոս-Այրեսում լույս տեսաւ

19 «Նարեկ աղօթից հարազատ և զգուշաւոր լուծմամբք նորոգ բացայայտեալ (Նարեկլուծ), աշխատասիրութեամբ տեառն հօր Գարրիէլի աթոռակալ վարդապետի Ալեքտիբեան Կոստանդնուպօլսեցոյ», Վենետիկ, 1801, էջ ԺԳ:

«Նարեկ, Մատեան ողբերգութեան ս. Գրիգոր Նարեկացիի, գրարար բնագրի հանդիպադրութեամբ աշխարհարարի վերածեց Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի» գիրքը: Դա տողատված, չափածո հրատարակութիւն է և հենց դրա համար էլ ունի առանձնակի արժեք: Հիւրավի, «Մատեան ողբերգութեան» պոեմը չափածո ստեղծագործութիւն է, հաճախ՝ հանգավորված, գրված հիմնականում հնգավանկ անդամներով, ինչպես նշել է դեռևս մեծանուն հայագետ Մանուկ Արեղյանը²⁰: Նոր պատրաստվող հրատարակութիւնը ևս լինելու է տողատված, ըստ որում տողատման հիմքում դրվում է 1948 թ. հրատարակութիւնը:

Սովետական Հայաստանում «Մատեանը» չի ունեցել ամբողջական հրատարակութիւն: Ընտրովի հատվածներ են տպագրվել առանձին ժողովածուներում, որոնցից կարևոր են «Ընտիր էջեր»²¹ և «Մարգարիտներ հայ քնարերգութեան»²² ժողովածուները: Բացի դրանից, լույս են տեսել «Մատեան ողբերգութեան» պոեմի աշխարհարար երկու թարգմանութիւն, մեկը գրեթե լրիվ (թարգմանել է Մկրտիչ Խերանյանը)²³, մյուսը՝ ծաղկաբաղ (վազգեն Գևորգյանի թարգմանութեամբ)²⁴:

Բնագիրը պատրաստելիս հաշվի են առնվելու ինչպես հայ դասական, այնպես էլ սովետական բնագրագիտութեան սկզբունքներն ու նվաճումները:

Հուսանք, որ այդ աշխատանքները կավարտվեն հաջողությամբ, և ընթերցողը կստանա Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հանճարեղ երկի գիտական և քննական-համեմատական նոր ու լավագույն հրատարակութիւնը:

Ա. ՂԱԶԻՆՅԱՆ

20 Մ. Արեղյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1968, էջ 616:

21 «Ընտիր էջեր հայ գրականութեան, հընագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 1946 (էջ 219—229):

22 «Մարգարիտներ հայ քնարերգութեան, հնագույն շրջանից մինչև ԺԸ դար», հատ. Ա, Երևան, 1971 (էջ 58—71):

23 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, գրարարից թարգմանեց Մկրտիչ Խերանյան, Երևան, 1960:

24 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, ծաղկաբաղ, թարգմանութիւն Վազգեն Գևորգյանի, Երևան, 1970: